լով, թէ նա խոյս է տալիս հայոց ազատութեան գործին արդեամբ մասնակցելուց և իբր թէ անտարբեր է դէպի ազգի վիճակը։ Այդ կչտամբանքը նոյն իսկ կաթողիկոսի ականջին էլ հասաւ, և նա մի ընդարձակ գրութեան մէջ առ հնդկարնակ Շամիր խանը, որ այն դարու ամենագործունեայ ազգասէրներից մէկն էր, բացատրեց իւր հայեացքը յիշեալ խնդրի վերաբերմամբ, ցոյց տալով և այն պատճառները, որոնք ստիպում էին իրեն իւր բռնած ընթացքին հետևել։ «Գրած էիր ինձ որ մեր ազգի և աշխարհի ազատութեան համար հոգ տանում և յիշատակած էիր այդ նպատակին ծառայող մի քանի միջոցներ։ Խօսքերդ քո ջերմ ազգասիրութեան և ազգի մասին ունեցած հոգածութեան ապացոյց են։ Երանի՜ թէ դրանք գոնէ մասամբ իրագործելի լինէին. դրա համար սակայն անհրաժեշտ է, որ մեր ազգը հաւատացողների և բարեմիտների իշխանութեան ներքոյ գտնուէր և ապահովութիւն վայելէր, որպէս զի կարենայինք նրանց օգնութեամբ երջանկութեան թեկնածել. բայց ահա անողորմ թշնամիների վայրագութեան ենք մատնուած. և քանի որ նոյն իսկ հաւատարիմ ծառայութեամբ անկարող ենք գթութիւն գտնել նրանցից, ի՞նչ կլինէր, եթէ մենք անհնազանդութիւն ցոյց տայինք։ Առ այս դու կասես, թէ մեզ հաճելի է սարկանալ անօրէններին և մենք ազատութիւն սիրող չենք. սակայն օրհնեալ որդի, եթէ դու մեր երկիրը գայիր, Զուլֆայից մինչև այստեղ և ուրիշ կողմերը չրջէիր, ուր որ ապրում են մերայինք, աչքերովդ կըտեսնէիր նրանց թշուառ կացութիւնն և իշխանների բռնութիւնը և անձամբ կըհամոզուէիր, որ այդ դիտումները չեն կարող իրագործուել, և եթէ իրագործելի լինէին, միթէ այնքան յիմար ենք, որ չկամենայինք տառապանքներից ազատուել... [1])

Մոլդավիա կանչեց Նրան։ Բէյնէգսը կարծեօք իմաստոյ ծանօթ էր Յ. վսէփ Սրբազանի, Լազարեանների և Մանուչարեանների հետ։ Սրբազանն իւր յիշատակարանների մէջ ասում է, թէ 1793 թ. Նրան բժշկում էր Բէյնէգս դոկտորը։ Բէյնէգսը կոլլէժսկիյ սավէտնիկի աստիճան ունէր և բժշկական ինստիտուտի վերատեսուչ և բժշկական խորհրդի քարտուղար էր, երբ որ մեռաւ։ Biographische Skitze des Russisch-Kaiserlichen Collegien Raths Dr. Jacob Reineggs, von J. D. Cerstenberg. Cotha und S. Petersburg. Bei Cerstenberg und Dittmar. 1797. էջ 333–335, 377—382, 387—389։

[1]) Գրեալ էին մեզ վասն ազատութեան աշխարհիս մերոյ և

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան